ԵՐՇԻԿԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄՈԼՈՐԵՑՄԱՄԲ ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մրցակցության
Պաշտպանության Հանձնաժողով

Մրցակցության
Պաշտպանության Հանձնաժողով

Սպառողը, մոլորեցումից խուսափելու նպատակով երշիկեղեն ձեռք բերելիս, պետք է առաջնորդվի հետևյալ քայլերով՝

ՔԱՅԼ 1. Արդյո՞ք երշիկեղենի անվանման մեջ կամ անվանմանը կից առկա է մակնշում վերջինիս խմբի (մսային, միս պարունակող և այլն) և տեսակի (երշիկեղեն, կիսապատրաստվածք և այլն) վերաբերյալ:

1. Եթե երշիկեղենի փաթեթվածքի վրա մակնշված է մսային, ապա վերջինիս բաղադրամասում մսային բաղադրամասերի զանգվածային բաժինը չի կարող 60 տոկոսից պակաս լինել:

Օրինակ՝ կիսապատրաստ երշիկ «Կրակովյան», խումբը՝ մսային. խոզի միս՝ 40%, տավարի միս՝ 20%, հավի միս՝ 10%, խոզաճարպ՝ 5%:

Մսի զանգվածային բաժինը կազմում է 75% > 60%

Մրցակցության
Պաշտպանության Հանձնաժողով

2. Եթե երշիկեղենի փաթեթվածքի վրա մակնշված է միս պարունակող, ապա վերջինիս բաղադրամասում պարունակվող մսային բաղադրամասերի զանգվածային բաժինը պետք է կազմի 5-60 տոկոս (ներառյալ):

Օրինակ՝ կիսապատրաստ երշիկ «Կրակովյան», խումբը՝ միս պարունակող. խոզի միս՝ 20%, տավարի միս՝ 10%, հավի միս՝ 8%, խոզաճարպ՝ 2%:

Մսի զանգվածային բաժինը կազմում է 40%

5 % < 40% < 60%

Մրցակցության
Պաշտպանության Հանձնաժողով

ԵՐՇԻԿԵՂԵՆԻ ԽՄԲԻ ԵՎ ՏԵՍԱԿԻ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1.ՍԽԱԼ ՄԱԿՆՇՈՒՄ

Առկա է տեղեկություն մսամթերքի տեսակի մասին՝ եփած երշիկ, սակայն առկա չէ տեղեկություն դրա խմբի մասին՝ մսային, միս պարունակող և այլն:

2.ՍԽԱԼ ՄԱԿՆՇՈՒՄ

Առկա չէ տեղեկություն ինչպես մսամթերքի խմբի, այնպես էլ տեսակի մասին:

3.ՃԻՇՏ ՄԱԿՆՇՈՒՄ

Առկա է տեղեկություն ինչպես մսամթերքի խմբի՝ մսային պաղեցված, այնպես էլ տեսակի՝ երշիկ հում-ապխտած մասին:

ՔԱՅԼ 2. Արդյո՞ք երշիկեղենի փաթեթվածքի վրա մակնշվում է սննդամթերքի բաղադրությունը և ի՞նչ կարգով:

- *Սննդամթերքի՝ փվյալ դեպքում երշիկեղենի փաթեթվածքի վրա պետք է մակնշվի սննդամթերքի բաղադրությունը (օրինակ՝ հավի միս, խոզաճարպ, կարտոֆիլի օսլա, կերակրի աղ և այլն):*

- *Երշիկեղենի բաղադրության մեջ մտնող բաղադրիչները պետք է նշվեն սննդամթերքի արտադրման պահի դրությամբ դրանց զանգվածային մասի նվազման կարգով:*

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- ***Չի թույլատրվում ընդհանուր կիրառման մասմթերքը մակնշել՝ օգտագործելով այնպիսի հորինված անվանումներ, որոնք ասոցացվում են մանկական սննդի համար նախատեսված մասմթերքի հետ (օրինակ՝ նրբերշիկ «Դեպսկիե», երշիկ «Կառապուզիկ», «Կոեպիշ», «Տոպտիժկա»):***

Տնտեսավարող սուբյեկտի կողմից նշված պահանջները չպահպանելը հանգեցնում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության, որի համար Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից կարող է նշանակվել տուգանք՝ տնտեսավարող սուբյեկտի տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:



Մրցակցության
Պաշտպանության Հանձնաժողով

ՔԱՅԼ 3. Ի՞նչ քայլեր կարող է ձեռնարկել սպառողն այն դեպքում, երբ առկա են վերոնշյալ պահանջների խախտումներ:

Սպառողը կարող է՝

- Ներկայացնել գրավոր հաղորդում Մրցակցության պաշտպանության հանձնաժողով, որի ձևը հրապարակված է հանձնաժողովի www.competition.am կայքում:
- Զանգահարել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի թեժ գիծ հետևյալ հեռախոսահամարով՝ +374-60-830840:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության
Պաշտպանության Հանձնաժողով

www.competition.am

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4

(+37460) 830 840